

Տաշիրի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով:

25.11.2020

Տիպ՝ [Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ](#)

Հայտատու՝ Տաշիրի համայնքապետարան

Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդված

2020թ. դեկտեմբերի 28-ին, ժամը 1130 ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանում՝ Վ.Սարգսյան փողոց, թիվ 94 հասցեում, կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով:

Աճուրդի է դրվում հետևյալ լոտը՝

Լոտ 1 Տաշիր համայնք, քաղաք Տաշիր հասցեում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 4159,6քմ 3-րդ կարգի արոտվայրը (ծածկագիր՝ 06-008-0319-0005) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 446117 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում, այն հարում է հաղորդակցության ուղիներին:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

ա) հայտ,

բ) աճուրդին մասնակցության համար սահմանված դրամի չափով վճարի անդորրագիր,

գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթերը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

Վաճառվելիք լոտին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև աճուրդի բացման նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի): Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

Նախավճարի չափը մեկնարկային գնի 5 % չափով, աճուրդի մասնակցության վճարը 2000 դրամ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-29-31,

2-34-06 հեռախոսահամարներով:

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94

Հեռ..՝ 025422168

Վեբ կայք՝ tashircity.am

Էլ. փոստ՝ tashirhamaynq@bk.ru

